

Ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **5 աշխատանքային** օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **37 200 000** (երեսունյոթ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում վճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող պահել պայմանագրի կողմերի պատշաճ կատարման պայմանները:

հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 33 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ
ՀՀ ներքին գործերի նախարարություն
ք. Երևան, Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900011049187
ՀՎՀՀ 02882913
Հեռ. 010 59-61-52
Էլ. հասցեն՝ gnumner@mia.gov.am

Ա. Ֆիդանյան
ՀՀ ԼԳՆ Զլխավոր քարտուղար/
(ստորագրություն)
Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ
«ՍՈՖԹ ՊՐՈՖ» ՍՊԸ
Երևան, Ա.Խաչատրյան, 2 15, բն.20
«ԱՄԻՕ ԲԱՆԿ ՓԲԸ»
Հ/Հ 1150006170490418
ՀՎՀՀ 00074714
Հեռ: 091 43-11-19
Էլ. Փոստ: margaryan@hotmail.com

Վ. Մարգարյան
(ստորագրություն)



Հավելված N 1
 « 14 » 02 2025թ. կնքված
 ՀՀ ՆԳՆ ՄԱԾՁԲ-2025/Ա-51 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆԱՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	Ծրագրային ապահովման սպասարկման ծառայություններ CPV-72261160/1	Ըստ հավելված 1.1-ի	դրամ	36 000 000	1	Ք. Երևան, Դավթաշեն 4-րդ թաղամաս, 17/10	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 20 օր հետո:
2	Ծրագրային ապահովման սպասարկման ծառայություններ CPV-72261160/2	Ըստ հավելված 1.2-ի	դրամ	1 200 000	1	Ք. Երևան, Դավթաշեն 4-րդ թաղամաս, 17/10	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 20 օր հետո:

ՀՀ դրամ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾ

Էլեկտրոնային կառավարման համակարգերի ծրագրային ապահովման սպասարկման և վերանորոգման ծառայությունների գնման

«ՀՀ բնակչության պետական ռեգիստր» և «ՀՀ ընտրողների ռեգիստր» էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգերը նախատեսված են ՀՀ տարածքում բնակվող ՀՀ քաղաքացիների, արտասահմանյան երկրների քաղաքացիների, ՀՀ քաղաքացիություն ստացած անձանց, ՀՀ-ում բնակվելու թույլտվություն ունեցող անձանց, փախստականի կարգավիճակ ունեցող անձանց, մեկից ավելի քաղաքացիություն ունեցող անձանց, ինչպես նաև, ընտրական իրավունք ունեցող անձանց հաշվառման հասցեների, ՀՀ տարածքային բաժանման, ՀՀ ընտրական տարածքների և ընտրատեղամասերը ընդգրկող հասցեների նկարագրերի տվյալների մշակման և դրանց հետ կատարվող գործառույթների իրականացման և կառավարման համար:

«ՀՀ բնակչության պետական ռեգիստր» և «ՀՀ ընտրողների ռեգիստր» էլեկտրոնային կառավարման համակարգերը բաղկացած են կենտրոնական ռեգիստրից և տարածքային ռեգիստրներից (տեղական ռեգիստրներից): Համակարգերը վարվում են ՀՀ օրենքով սահմանված պետական լիազոր մարմնի՝ ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության կողմից:

Տեղական ռեգիստրների կառավարումը իրականացվում է ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության տարածքային բաժինների կողմից:

«ՀՀ բնակչության պետական ռեգիստր» և «ՀՀ ընտրողների ռեգիստր» համակարգերի տվյալների հենքերը պարունակում են՝

- ՀՀ հին նմուշի, նույնականացման քարտի, կենսաչափական տվյալներով անձնագրերի, ճամփորդական փաստաթղթերի տվյալներ:

- Անձը հաստատող փաստաթղթի համար դիմած անձի լուսանկարը (սկսած 2007թ.):

- ՀՀ տարածքում բնակվող՝ կացության քարտ ունեցող արտասահմանյան քաղաքացիների տվյալներ:

- Արտասահմանում բնակվող ՀՀ քաղաքացիների տվյալներ:

- ՀՀ-ում բնակվող փախստականների տվյալներ:

- ՀՀ արտաքին գործերի, արդարադատության, աշխատանքի և սոցիալական հարցերի, պաշտպանության նախարարություններից և տեղական ինքնակառավարման մարմիններից ստացվող տվյալներ:

- Հետախուզության մեջ գտնվող և վարչական իրավախախտումներ գործած անձանց տվյալներ:

- ՀՀ տարածքային բաժանման ՀՀ բնակավայրերի վերաբերյալ տվյալներ:

- ՀՀ ընտրատարածքների և ընտրատեղամասերի վերաբերյալ տվյալներ:

- Հաշվառման հասցեների (մարզ, համայնք, բնակավայր, փողոց, շենք/տուն, բնակարան) տվյալներ:

«ՀՀ բնակչության պետական ռեգիստր» և «ՀՀ ընտրողների ռեգիստր» համակարգերի հիմնական ենթահամակարգերը և ֆունկցիոնալ բաղադրիչներն են՝

- ՀՀ քաղաքացիների անձնագրերի տրամադրման գործառույթները իրականացնող ենթահամակարգեր՝

- Նոր անձնագրի գրանցում

- Անձնագրի փոխանակում

- Անձնագրի ոչնչացում
- Անձնագրի անվավեր ճանաչում
- Քաղաքացիների, ըստ բնակության վայրի հաշվառման ենթահամակարգեր՝
 - ՀՀ քաղաքացիների և օտարերկրյա քաղաքացիների հաշվառում
 - ՀՀ քաղաքացիների և օտարերկրյա քաղաքացիների հաշվառումից հանում
 - ՀՀ քաղաքացիների և օտարերկրյա քաղաքացիների հաշվառման տվյալների փոփոխություն
- Փախստականների տվյալների մշակման և ճանկորդական փաստաթղթերի տրամադրման գործառնությունը իրականացնող ենթահամակարգեր
- Հանրային ծառայությունների համարանիշի գներացման և դրա հետ առնչվող գործառնությունի կառավարման ենթահամակարգ
- ՀՀ քաղաքացիական ակտերի գրանցման բաժիններից ստացված տվյալների (ծնունդ, հայրության ճանաչում, մահ...) մշակման և պետեզփստում գրանցման ենթահամակարգ
- Մինչև 16 տարեկան անձանց, օտարերկրացիների, քրեակատարողական հիմնարկներից ստացվող տվյալների մշակման, հաշվառման և պետեզփստում գրանցման ենթահամակարգ
- Արագացված կերպով տրամադրվող անձնագրերի և նույնականացման քարտերի վերաբերյալ պայմանագրերի ձևակերպման, տվյալների մշակման ենթահամակարգ
- ՀՀ քաղաքացիություն ստացած այլ պետությունների քաղաքացիների տվյալների գրանցման, հաշվառման և մշակման ենթահամակարգ
- Կորցրած անձնագրերի տվյալների մշակման և առցանց ԱԱԾ տեղեկատվական կենտրոնին տրամադրելու գործընթացները ապահովող ենթահամակարգ
- Արգելված և սխալ տրված անձնագրերի տվյալների մշակման ենթահամակարգ

- Տվյալների ստուգման ենթահամակարգ
 - հետախուզման մեջ գտնվող և վարչական հսկողության տակ գտնվող անձանց տվյալների մշակում և անհրաժեշտ օպերատիվ հսկողության իրականացում
 - Փաստաթղթերի գրանցման և տրամադրման թույլտվությունների ձևակերպման ենթահամակարգ
 - Անձնագրերի և ճամփորդական փաստաթղթերի կենտրոնացված տպագրման ենթահամակարգ
 - «ՀՀ բնակչության պետական ռեգիստր» համակարգի և կենսաչափական տվյալներով անձնագրային համակարգի համակցման ենթահամակարգ
 - Համակարգերում փոփոխվող տվյալների և գործողությունների լրգավորման կազմակերպման և իրականացման ենթահամակարգ
 - Կենտրոնական և տեղային բազաների նույնականացման ենթահամակարգ
 - Օժանդակ ենթահամակարգեր՝
 - տարբեր տիպի վիճակագրական տվյալների ստացում, վերլուծություններ և ամփոփումներ
 - կենտրոնական տվյալների հենքում անհրաժեշտության դեպքում, ըստ համապատասխան թույլտվության տվյալների փոփոխում և գործողության լրգավորում
 - Համակարգերի տարբեր ֆունկցիոնալ ճյուղերի հասանելիության, համակարգից օգտվողների և արմինիստրատորի իրավունքների, թույլտվությունների և սահմանափակումների կազմակերպման և վերահսկման ենթահամակարգ
 - Տեղեկանքների և հաշվետվությունների կազմավորման և արտաձման ենթահամակարգ
 - Բնակության նոր հասցեների կազմավորման և հաստատման ենթահամակարգ:

- Այլ գերատեսչություններից և կազմակերպություններից ստացվող հարցումների սպասարկման և տվյալների փոխանակման ծրագրային ենթահամակարգեր և web սերվիսներ՝
 - ՄՔԾ – ՀՀ ՆԳՆ ոստիկանության տեղեկատվական կենտրոն
 - ՄՔԾ – ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանություն
 - ՄՔԾ – ԱԱԾ սահմանային կետեր
 - ՄՔԾ– ՀՀ ոստիկանության Երևանի վարչություն
 - ՄՔԾ – ԱԱԾ
 - ՄՔԾ - ԱԳՆ
 - ՄՔԾ – ՔԿԱԳ բաժիններ
 - ՄՔԾ - ՊԵԿ
 - ՄՔԾ – “ՆՈՐՔ” տեղեկատվավերլուծական կենտրոն
 - ՄՔԾ - ԴԱՀԿ
 - ՄՔԾ - ԿԱԴԱՍՏՐ
 - ՄՔԾ – Նոտարական գրասենյակներ
 - ՄՔԾ – ՀՀ կենտրոնական բանկ
 - ՄՔԾ – Դեպոզիտարիա
 - ՄՔԾ – ՀՀ մաքսային վարչություն
 - ՄՔԾ – ԷԿԵՆԳ
 - ՄՔԾ – Վիճակետյոժ
- ՀՀ ընտրական տարածքների և տեղամասերի նկարագրերի ձևավորման և ներմուծման ենթահամակարգ
- Ըստ ընտրատեղամասերի ՀՀ ընտրողների ռեգիստրի ստացման ենթահամակարգ



- Ընտրացուցակների ստացման և տպագրման ենթահամակարգ
- Հասցեների նկարագրերի մշակման, պահպանման, անփոփոխելի ստացման ենթահամակարգ
- Էլեկտրոնային տարբեր ձևաչափերի ընտրացուցակների ստացման ենթահամակարգ
- Օրենքով սահմանված լրացուցիչ ընտրացուցակների տվյալների մշակման և ձևավորման ենթահամակարգ
- Լրացուցիչ ընտրացուցակների ստացման և տպագրման ենթահամակարգ
- Ընտրողի տվյալների որոնման և դիտարկման ենթահամակարգ

Համակարգերն աշխատում են միջգերատեսչական գլոբալ ցանցում, առանձնացված կապուղիներով: Գլխամասում՝ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունում կազմավորված է տվյալների կենտրոն, ժամանակակից տեխնիկական հագեցվածությամբ, որտեղ տեղակայված են տվյալների հանրապետական հենքերը, սպասարկող ծրագրային ապահովումը, անվտանգության և հասանելիության տեխնիկական և ծրագրային միջոցները:

Տեղեկատվության փոխանակումն իրականացվում է հիմնականում CDN տեխնոլոգիայով՝ հաղորդակցման առանձին զծերի միջոցով: Գործառնական մակարդակով տվյալների փոխանակումն իրականացվում է Http/Https և Ftp արձանագրություններով, SOAP ստանդարտին համապատասխան՝ կիրառելով TCP/IP փոխադրման արձանագրություն:

ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայությունում տեղակայվել են տվյալների մշակման երեք կենտրոններ, որոնցից երրորդը՝ վթարային վերականգնման տվյալների կենտրոնն է.

Համակարգի Տարրերը



Տվյալների կենտրոնում տեղակայված են՝

- ծանրաբեռնվածության հավասարակշռման սարքի և ներխուժման կանխարգելման համակարգեր, 3 օրինակ (Apache սերվեր, Snort տեղեկատվության հայտնաբերման համակարգ),
- ծրագրային սերվերներ (windows սերվեր 2012 R2, IIS սերվեր, Rsyslog սերվեր), 3 օրինակ
- տվյալների հենքի սերվեր (Oracle 11g Release 2, Red Hat Enterprise Linux 6, Rsyslog սերվեր), 2 օրինակ
- ցանցին կցված սերվերային պահուստավորման (NAS) 1 սարք՝ տեղեկամատյանների կենտրոնացված հավաքագրման համար:
- Oracle WebLogic Server 10.3.6
Ապահովելու ինֆրակառուցվածքում կոնֆիգուրացում և ինտեգրացում, որպես J2EE հենք Oracle-ի մնացած ծրագրային միջոցների համար, որոնք տեղադրված են համակարգում
- Oracle Enterprise Cloud Control 12c r3
Երկու կայքերի, Oracle-ի ծրագրային միջոցների կառավարման միջավայր, ինֆրակառուցվածքի գրաֆիկական կառավարման համար, որն ունի ինտեգրացված վեբ սերվեր և մենեջմենթի բազմաֆունկցիոնալ միջավայր: Աշխատում է tcp port-ով (CloudControl-ի միջոցով կատարվում է Oracle-ի ինֆրակառուցվածքի ողջ կառավարումն ու մոնիտորինգը, սկսած տվյալների հենքերի մենեջմենթից վերջացրած Dataguard-ի կոնֆիգուրացիաներով և մենեջմենթով):
- Active Data Guard 11g Enterprise Edition
Data Broker-ի կոնֆիգուրացում՝ հիմնական կայքի տվյալների հենքը, որպես Primary Database ռեպլիկացվում է Backup կայքի տվյալների հենքում: Ռեպլիկացիան կատարվում է ռեալ ժամանակում: Ժամանակի ցանկացած պահին, Backup կայքի տվյալների հենքը հանդիսանում է Primary կայքի Database-ի ճիշտ ֆիզիկական կրկնօրինակը, որը գտնվում է read only –ի ռեժիմում և կարող է ակտիվացվել ելնելով ինֆրակառուցվածքում առկա խափանման հատուկ սցենարներից:
- Active Data Guard 11g Enterprise Edition Failover scenario configuration

Data Broker-ի 'Failover'-ը կոնֆիգուրացված է, flashback տեխնոլոգիայի հիման վրա: ստեղծված է flashback լոգավորող հենք, որը դինամիկ թարմացվում է Database -երի կողմից, վթարի դեպքում, անհապաղ, տվյալների հենքերի դերերի փոփոխման նպատակով: Վթարային իրավիճակներում տվյալների հենքերի դերերի փոփոխությունը կատարվում է սկրիպտների միջոցով: Դերերի հետադարձ վերականգնումը կատարվում է switchover տեխնոլոգիայի միջոցով:

Ստեղծվել են երկու հենքեր՝ մեկական հենք համակարգի ամեն կայքում՝ գլխամասում primary, իսկ մյուս կայքում physical standby ուժեղմում, որոնք միմյանց ճիշտ կրկնօրինակն են և սինխրոնիզացվում են 2արունակաբար՝ ասինխրոն տարբերակով: Failover-ը կիրառելի է միայն physical standby մասում, քանի որ դերերի փոփոխման անհրաժեշտություն կա միայն primary հենքի անհասանելիության դեպքում: Վթարային իրավիճակի կարգավորումից հետո primary հենքը ստանձնում է physical standby-ի պարտականություններ, ինչից հետո սկսում է սինխրոնիզացվել նախկին physical standby ներկայիս primary հենքի հետ, սինխրոնիզացիան ավարտվելուց հետո կատարվում է switchover, ինչի արդյունքում հենքերը վերականգնում են իրենց նույն կարգավիճակը:

Համակարգում տեղակայված ծրագրային միջոցներն են՝
DB Server

RHEL 6 update 4

Required Packages for Oracle:

binutils-2.17.50.0.6

compat-libstdc++-33-3.2.3

compat-libstdc++-33-3.2.3 (32 bit)

elfutils-libelf-0.125

elfutils-libelf-devel-0.125

gcc-4.1.2

gcc-c++-4.1.2

glibc-2.5-24

glibc-2.5-24 (32 bit)
glibc-common-2.5
glibc-devel-2.5
glibc-devel-2.5 (32 bit)
glibc-headers-2.5
ksh-20060214
libaio-0.3.106
libaio-0.3.106 (32 bit)
libaio-devel-0.3.106
libaio-devel-0.3.106 (32 bit)
libgcc-4.1.2
libgcc-4.1.2 (32 bit)
libstdc++-4.1.2
libstdc++-4.1.2 (32 bit)
libstdc++-devel-4.1.2
make-3.81
sysstat-7.0.2

Oracle:

wls1036_generic.jar-WebLogic Server
em12103_linux64-Enterprise Manager Cloud Control 12c
linux.x64_11gR2_database-Oracle 11g r2 database enterprise edition

Application Server

1. Windows Server 2012 std 64Bit, IIS Server
2. Oracle 12g R2 client
3. Visual Studio 10(10.0, 2010) X64, 64Bit
4. Folder #AVV_WCF (Project)

AwServerHost - References

- BPRServiceLib
- System
- System.Core
- System.Data
- System.Data.DataSetExtension
- System.Deployment
- System.Drawing
- System.ServiceModel
- System.Windows.Forms
- System.Xml
- System.Xml.Linq

Imported namespaces:

- Microsoft.VisualBasic
- System
- System.Collections
- System.Collections.Generic
- System.Data
- System.Drawing
- System.Diagnostics
- System.Windows.Forms
- System.Linq
- System.Xml.Linq

- AvwServiceLib
 - References
 - Oracle.DataAccess
 - System
 - System.Configuration
 - System.Core
 - System.Data
 - System.Run Time.Serialization
 - System.ServiceModel
 - System.Xml
 - System.Xml.Linq

Imported namespaces:

- Microsoft.VisualBasic
- System
- System.Collections
- System.Collections.Generic
- System.Data
- System.Drawing
- System.Diagnostics
- System.Run Time.Serialization
- System.ServiceModel
- System.Linq
- System.Xml.Linq

Clients

1. Microsoft Windows XP SP3, Ms Windows 7
2. Oracle 11g R2 Personal Edition
3. Visual Studio 9(SP1 9.0, 2008) X86 32Bit

4. Folder #AVV (Project) - References

- AWS
- AxInterop.WIA
- Interop.Microsoft.Office.Core
- Interop.VBIDE
- Interop.WIA
- Microsoft.ReportViewer.WinForms
- Microsoft.VisualBasic.PowerPacks.Vs
- Oracle.DataAccess
- Interop.OracleInProcServer
- System
- System.Core
- System.Data
- System.Data.DataSetExtension
- System.Data.OracleClient
- System.Deployment
- System.Design
- System.DirectoryServices
- System.Drawing
- System.Runtime.Serialization
- System.ServiceModel
- System.Windows.Forms
- System.Xml
- System.Xml.Linq

Imported namespaces:

- Microsoft.VisualBasic
- System
- System.Collections

- System.Collections.Generic
- System.Data
- System.Drawing
- System.Diagnostics
- System.Windows.Forms
- System.Linq
- System.Xml.Linq
- Xml.Linq

Տվյալների կենտրոնական հենքից օգտվում են << բնակչության պետական ռեգիստրի կենտրոնական ապարատը՝ անձնագրային և վիզաների վարչությունը, անձնագրային և վիզաների վարչության տարածքային բաժինները, արտաքին գործերի նախարարության դեսպանությունները, հյուպատոսությունները (մոտ 145) և շուրջ 20 այլ գերատեսչությունների և կազմակերպությունների տեղեկատվական ծառայություններ, որոնց համար համակարգում մշակված են արձենտային կիրառական ծրագրային միջոցներ:

Համակարգերը օրական սպասարկում են հազարավոր հարցումներ ինչպես հանրապետության արձենտներից, այնպես էլ արտերկրից:

Ընդհանուր առմամբ համակարգերը կարելի է բաժանել 4 հիմնական օղակների, որոնք կարիք ունեն սպասարկման և մոնիտորինգի՝

1. Տվյալների հենքի օղակ
2. Ներխուժման հայտնաբերման և ծանրաբեռնվածության բաշխման օղակ
3. Արտաքին ցանցային միացման և երթուղման օղակ
4. Կիրառական ծրագրային հանգույցի օղակ

1. Տվյալների հենքի օղակի սպասարկում

1.1 Տվյալների հենքի սպասարկումը շարունակական գործընթաց է, պահանջում է անընդհատ և պարբերական միջամտություն՝ արագագործության կատարելագործում, խափանման հնարավոր դեպքերի կանխարգելում:

1.2 Տվյալների հենքի օղակը կառուցված է երկու հանգույցից՝ ակտիվ և պասիվ:

Պասիվ հենքը ակտիվ հենքի հայելային կրկնօրինակն է, որն անընդհատ գտնվում է սինխրոն վիճակում ակտիվ տվյալների հենքի հետ: Այս գործնթացը նույնպես պահանջում է անընդհատ և պարբերական միջամտություն, քանի որ բարձր ռիսկային է համարվում ցանկացած տվյալի կորուստ:

1.3 Ակտիվ տվյալների հենքի հնարավոր խափանման դեպքում պահանջվում է անհապաղ միջամտություն, պասիվ հենքի ակտիվացման նպատակով:

1.4 Տվյալների հենքերը ատոլիտավորվում են լոգավորման համակարգում: Անհրաժեշտ է պարբերաբար ստուգել լոգերը և արձագանքել՝ ցանկացած խնդրի առաջացման դեպքում:

1.5 Տվյալների հենքերը պահուստավորվում են պարբերաբար: Պահուստավորման համակարգը նույնպես պահանջում է, պարբերական ստուգումներ և մասնագիտական միջամտություններ:

1.6 Տվյալների հենքերը տեղադրված են Linux օպերացիոն համակարգի միջավայրում: Օպերացիոն համակարգը պահանջում է պարբերական պրոֆիլակտիկ միջամտություն և անընդհատ մոնիտորինգ, բեռնվածության հետագիծը վերահսկելու նպատակով, ինչպես նաև, անվտագության միջոցառումների կազմակերպում՝ խոցելի կետերի հայտնաբերման և վերացման նպատակով:

2. Ներխուժման հայտնաբերման և ծանրաբեռնվածության բաշխման օղակի սպասարկում

2.1 Ներխուժման հայտնաբերման և ծանրաբեռնվածության բաշխման օղակը բաղկացած է 3 ֆիզիկական հանգույցներից, որոնց վրա տեղադրված է Linux օպերացիոն համակարգ: Միջավայրում աշխատում է բեռնվածության բալանսավորման համակարգ՝ HAProxy և ծառայություններ, հասանելիության, անխափանության ապահովման համակարգ՝ Keepalived, որոնք ֆունկցիոնալ ապահովման և մոնիտորինգի կարիք ունեն:

2.2 Օղակի մեկ այլ կարևոր ֆունկցիան ներխուժման հայտնաբերման և կասեցման ավտոմատ համակարգն է՝ Snort-ը: Կախված անվտագության միջոցառումների և համակարգի ընդհանուր շարունակական մոնիտորինգի դիսկային անալիզների արդյունքներից, Snort-ը մշտական կոնֆիգուրացումների և կանոնների ծրագրավորման անհրաժեշտություն ունի:

3. Արտաքին ցանցային միացման և երթուղման օղակ

3.1 Այս օղակում գործում են երթուղիներ, որոնք ապահովում են կապը տարածքային ստորաբաժանումների և արտաքին գերատեսչությունների հետ: Երթուղումը կազմակերպված է 2 հայելային կոնֆիգուրացում ունեցող երթուղիներից, որոնցից ցանկացած մեկի հետ խնդիր առաջանալու դեպքում, ենթակառուցվածքը շարունակվում է հասանելի մնալ: Այս օղակը կատարում է նաև Firewall-ի դերակատարում: Կիրառված են կանոններ, որոնք սահմանափակում են արտաքին աշխարհի մուտքը դեպի համակարգ: Օղակի սպասարկումը ենթադրում է շարունակական միջամտություններ, կախված կապուղիների ձևափոխումներից: Երթուղիները նույնպես ունեն մոնիտորինգի անհրաժեշտություն:

4. Կիրառական ծրագրային հանգույցի օղակի սպասարկում

Տվյալների կենտրոնի կիրառական ծրագրային օղակում գտնվում են 3 կիրառական ծրագրային հանգույցներ, որոնք աշխատում են Windows Server 2012 օպերացիոն համակարգով: Պահանջվում է բարձրորակ մասնագիտական պարբերական վերահսկում, անհրաժեշտության դեպքում միջամտություն և թարմացում անվտագության և ֆունկցիոնալ կատարելագործման նպատակով, ինչպես նաև ծրագրավորվող հանգույցների ֆունկցիոնալ փոփոխությունների ենթարկում:

4.1 Կիրառական ծրագրային ապահովումները աշխատում են IIS(Internet Information Services) վեբ և windows service հանգույցներում; Պահանջվում է մասնագիտական հմտություն կոնֆիգուրացումների, պրոֆիլակտիկաների և անալիտիկայի ենթարկելու համար:

4.2 «ՀՀ Բնակչության պետական ռեգիստր» և «ՀՀ Ընտրողների ռեգիստր» համակարգերը բազմաֆունկցիոնալ և բազմամոդուլային

համակարգեր են:

Այս համակարգերի կիրառական ծրագրային ապահովումը բաղկացած է 25 ենթահամակարգերից (ներառյալ ԼՂՀ համար մշակված ծրագրային միջոցները), այլ գերատեսչությունների հետ տվյալների փոխանակման 10 web սերվիսներից և բազմաթիվ օմանդակ ծրագրային միջոցներից, որոնք ապահովում են ՀՀ բնակչության պետական ռեգիստրի, ՀՀ ընտրողների ռեգիստրի և անձնագրային ծառայությունների գործընթացների ավտոմատ կառավարումը:

5. Հիմնական պահանջներ

- 5.1 Ապահովել «ՀՀ բնակչության պետական ռեգիստր» և «ՀՀ ընտրողների ռեգիստր» էլեկտրոնային կառավարման համակարգերի բոլոր հանգույցների՝ տեխնիկական, կառուցվածքային և ծրագրային ապահովման սպասարկման գործընթացները: Մասնավորապես՝ բոլոր ենթահամակարգերի անխափան աշխատանքը, անհրաժեշտության դեպքում, օպերատիվ կերպով և բարձր մասնագիտական մակարդակով կատարել ծրագրային փոփոխություններ՝ կապված անճշտությունների և սխալների ուղղման, ինչպես նաև, անձնագրային ծառայությունների գործընթացների բարելավման առանձին հարցերի լուծման հետ:
- 5.2 Ապահովել տվյալների կենտրոնի ընդհանուր ֆունկցիոնալության, բոլոր բաղադրիչների հուսալի, որակյալ աշխատանքի ստուգում և դիագնոստիկա:
- 5.3 Ապահովել տվյալների կենտրոնի հանգույցների պրոֆիլակտիկա, հանգույցների աշխատանքի գնահատում, ներքին ենթահամակարգերի բաղադրիչների և մեխանիզմների ֆունկցիոնալության ստուգում:
- 5.4 Ապահովել տվյալների կենտրոնի հանգույցների միջև կապերի և ինտերֆեյսերի պրոֆիլակտիկա, վթարված կապերի և մալուխների հայտնաբերում և փոփոխում:
- 5.5 Ապահովել տվյալների կենտրոնի վերաբերյալ խորհրդատվության տրամադրում ներքին սպասարկման անձնակազմին և օգտագործողներին:
- 5.6 Տվյալների կենտրոնի էֆեկտիվ ֆունկցիոնալության և զարգացման համար առաջարկությունների կազմում և հիմնավորում՝ ապարատային և ծրագրային հանգույցների մոդերնիզացիայի և փոփոխման վերաբերյալ:

5.7 Ապահովել տվյալների կենտրոնի սերվերային միջավայրի, ծրագրային ապահովման, տվյալների փոխանակման կորպորատիվ ցանցի, տվյալների պահպանման հանգույցների աշխատանքային ամբողջ ցիկլի ղեկավարում, ներառելով՝ պլանավորում, մշակում/ձեռք բերում, ներդրում, սպասարկում/ուղեկցում, մոդերնիզացում, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում, դրանց հանգույցների շահագործումից դուրս բերում:

5.8 Ապահովել տվյալների կենտրոնի տեխնիկական և տեխնոլոգիական ռիսկերի, որոնք կապված են ոչ հուսալի տեխնոլոգիաների կամ վատ հեռահաղորդակցության ծառայությունների օգտագործման հետ, արագ և ժամանակին տեղեկատվության տրամադրում տվյալների կենտրոնի ղեկավարությանը և առաջարկությունների ձևակերպում՝ դրանց վերացման համար:

5.9 Ապահովել տվյալների հենքերի անխափան աշխատանքը հաշվի առնելով հետևյալ պահանջները.

- արագագործության կատարելագործում
- խափանման հնարավոր ռեպերի կանխարգելում
- տվյալների հենքերի ակտիվ և պասիվ դերերի փոփոխության ընթացքում տվյալների կորուստի բացառում
- անհրաժեշտության դեպքում տվյալների, ակտիվ և պասիվ հենքերի սինխրոն կրկնօրինակման վերականգնում, հենքերի ակտիվացում
- տվյալների հենքերի աուդիտավորման և լոգավորման համակարգերի սպասարկում, անհրաժեշտության դեպքում լոգավորված տեղեկատվության արտաձում
- տվյալների հենքերի պահուստավորման համակարգի սպասարկում, անհրաժեշտության դեպքում մասնագիտական միջամտություն
- Linux և windows օպերացիոն համակարգերի սպասարկում, մոնիտորինգ, բեռնվածության ստուգում, անվտագության միջոցառումների կազմակերպում,

ծրագրային ապահովումների տեղակայման պարամետրերի հսկում, խոցելի կետերի հայտնաբերում և վերացում

5.10 Ապահովել ներխուժման հայտնաբերման և ծանրաբեռնվածության բաշխման համակարգի սպասարկում՝ հաշվի առնելով հետևյալ պահանջները.

- 3 ֆիզիկական հանգույցների, որոնց վրա տեղադրված է Linux օպերացիոն համակարգի միջավայրում աշխատող բեռնվածության բալանսավորման համակարգ՝ HAProxy, մոնիտորինգ, անհրաժեշտության դեպքում, ֆունկցիոնալ միջամտություն
- հասանելիության, ծառայությունների անխափանության ապահովման համակարգի՝ Keeralived ֆունկցիոնալ ապահովման մոնիտորինգ, անհրաժեշտության դեպքում, ֆունկցիոնալ միջամտություն
- ներխուժման հայտնաբերման և կասեցման ավտոմատ համակարգի՝ Snort սպասարկում, շարունակական մոնիտորինգ, վերլուծության արդյունքների հիման վրա կոնֆիգուրացումների և կանոնների ծրագրավորում

5.11 Ապահովել արտաքին ցանցային միացման և երթուղման հանգույցների անխափան աշխատանքը՝ հաշվի առնելով հետևյալ պահանջները.

- տարածքային ստորաբաժանումների, արտաքին գերատեսչությունների և կազմակերպությունների հետ կապը ապահովող երթուղիների սպասարկում և մոնիտորինգ
- արտաքին աշխարհի մուտքը դեպի համակարգ սահմանափակող կանոնների

կիրառում, անհրաժեշտության դեպքում, փոփոխություն և մոնիտորինգ
- մասնագիտական միջամտություններ, կապուղիների ձևափոխումների հետ
կապված

5.12 Ապահովել համակարգերի կիրառական ծրագրային հանգույցների սպասարկումը՝ հաշվի առնելով հետևյալ պահանջները.

- համակարգերի բոլոր ծրագրային ենթահամակարգերի, օժանդակ ծրագրային միջոցների, արտաքին գերատեսչությունների հետ տվյալների փոխանակաման web սերվիսների բարձրորակ մասնագիտական պարբերական վերահսկում, անհրաժեշտության դեպքում, միջամտություն և թարմացում, անվտագության և ֆունկցիոնալության ապահովում, ինչպես նաև, ծրագրավորվող հանգույցների ֆունկցիոնալ փոփոխությունների ենթարկում, կապված անճշտությունների հայտնաբերման, փոխանակվող տվյալների կազմի փոփոխության, աշխատանքի բարելավման որոշակի խնդիրների հետ

- IIS(Internet Information Services) վեբ և windows service հանգույցների վերահսկում, կոնֆիգուրացումների մոնիտորինգ, պրոֆիլակտիկա, ինչպես նաև, ծրագրավորվող հանգույցների ֆունկցիոնալ փոփոխությունների ենթարկում

5.13 Ապահովել ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունում գործող ՀՀ բնակչության պետական ռեգիստր ավտոմատացման համակարգի շրջանակներում մշակված նոր ենթահամակարգի ծրագրային միջոցների և տվյալների հենքի ուղեկցում, որն ապահովում է բնակչությանը արագացված կերպով տրամադրվող անձնագրերի և նույնականացման քարտերի վերաբերյալ պայմանագրերի ձևակերպման, տվյալների մշակման և ամփոփման գործառույթների ավտոմատացում:

5.14 Ապահովել ՀՀ բնակչության պետական ռեզիստր և ՀՀ ընտրողների ռեզիստր էլեկտրոնային կառավարման համակարգերի հիմնական և տարածքային ստորաբաժանումների սերվերների, աշխատանքային կայանների, տարածքային ստորաբաժանումներում գործող ծրագրային ապահովման անխափան աշխատանքը, ներառելով հետևյալ գործառույթները.

- թարմացված ծրագրային միջոցների ներդրում և դրանց համապատասխան համակցում սերվերի ծրագրային ապահովման և հարակից համակարգերի հետ
- ծրագրային ապահովման պարբերական վերաթարմացում
- տարածքային սերվերներում և կայաններում տեղադրված էլեկտրոնային համակարգի կամ սերվերների ծրագրային բաղադրիչների պարբերական վերաթարմացում

- սերվերների հսկում (մոնիտորինգ) և առաջացած խնդիրների լուծման տարբերակների առաջադրում

- նոր կայանների և սերվերների կոնֆիգուրացում, ապահովելով համակցումը դրանց և համակարգում առկա սերվերների միջև

- սերվերներում պարունակվող տեղեկատվության մոնիտորինգ, ամբողջականության և անվտանգության ապահովում, տվյալների արխիվացում: Մասնավորապես՝ օրեկան մեկանգամյա ամբողջական թարմացում՝ ամբողջական շտեմարանի պահուստային կրկնօրինակում (backup):

- համապատասխան գործառույթների կիրառում, որոնք կապահովվեն ԱՎՎ տեղեկատվության հասանելիությունը միայն ԱՎՎ կողմից սահմանված անձանց:

5.15 Կատարել համակարգերի տվյալների պարբերական արխիվավորում և անհրաժեշտության դեպքում տվյալների վերականգնում:

- 5.16 Կատարել համակարգերի՝ անձնագրային և վիզաների վարչությունում և տարածքային ստորաբաժանումներում առկա ծրագրային մոդուլների ուղեկցում, ծրագրային բարելավումներ և հայտնաբերված սխալների ուղղում, ինչպես նաև, տարածքային բաժիններից ստացվող հարցումների վերաբերյալ խորհրդատվություն և օպերատիվ կերպով գործնական միջամտություն՝ առաջացած խնդիրների լուծման համար:
- 5.17 կատարել «ՀՀ Բնակչության պետական ռեգիստր» – կենսաչափական տվյալներով անձնագրերի համակարգերի համակցման ծրագրային միջոցների ուղեկցում՝ ինչը ներառում է փոխանակվող տվյալների կազմի և ձևաչափի հսկում, ինչպես նաև հայտնաբերված անճշտությունների ուղղում:
- 5.18 Ապահովել այլ գերատեսչությունների հետ առցանց և պարբերական տեղեկատվության փոխանակման ծրագրային միջոցների ուղեկցում՝ ինչը ներառում է փոխանակվող տվյալների կազմի և ձևաչափի հսկում, ինչպես նաև հայտնաբերված անճշտությունների ուղղում:
- 5.19 Ապահովել համակարգերի տարբեր պահոցներում առկա Հանրային Ծառայությունների Համարանիշների և հասցեների կրկնությունների, տվյալների լրիվության և անճշտությունների հայտնաբերում և կարգավորում:
- 5.20 Ապահովել ՀՀ ընտրողների ռեգիստրի համակարգի ուղեկցում՝ ինչը ներառում է խորհրդատվություն տեղական ռեգիստրներին և գործուն միջամտություն ընտրատեղամասերի հասցեների նկարագրերի փոփոխությունների իրականացման ընթացքում: Տեղերում կատարված փոփոխություններին համապատասխան՝ ծրագրային ուղեկցում և հայտնաբերված անճշտությունների ուղղում:

ՀՀ ՆԳՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՌԵԳԻՍՏՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՆԿԱՐՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Չափաբաժին 2

1. Ապահովել «Քաղաքացիության ռեգիստր» էլեկտրոնային կառավարման համակարգի բոլոր հանգույցների՝ տեխնիկական, կառուցվածքային և ծրագրային ապահովման սպասարկման գործընթացները: Մասնավորապես՝ բոլոր ենթահամակարգերի անխափան աշխատանքը, անհրաժեշտության դեպքում, օպերատիվ կերպով և բարձր մասնագիտական մակարդակով կատարել ծրագրային փոփոխություններ՝ կապված անճշտությունների և սխալների ուղղման, ինչպես նաև, ծառայությունների գործընթացների բարելավման առանձին հարցերի լուծման հետ:
2. Ապահովել տվյալների կենտրոնի ընդհանուր ֆունկցիոնալության, բոլոր բաղադրիչների հուսալի, որակյալ աշխատանքի ստուգում և դիագնոստիկա:
3. Ապահովել տվյալների կենտրոնի հանգույցների պրոֆիլակտիկա, հանգույցների աշխատանքի գնահատում, ներքին ենթահամակարգերի բաղադրիչների և մեխանիզմների ֆունկցիոնալության ստուգում:
4. Ապահովել տվյալների կենտրոնի վերաբերյալ խորհրդատվության տրամադրում ներքին սպասարկման անձնակազմին և օգտագործողներին:
5. Տվյալների կենտրոնի էֆեկտիվ ֆունկցիոնալության և զարգացման համար առաջարկությունների կազմում և հիմնավորում՝ ապարատային և ծրագրային հանգույցների մոդերնիզացիայի և փոփոխման վերաբերյալ:
6. Ապահովել տվյալների հենքի անխափան աշխատանքը հաշվի առնելով հետևյալ պահանջները.
 - արագագործության կատարելագործում,
 - խափանման հնարավոր դեպքերի կանխարգելում,
 - տվյալների հենքի աուդիտավորման և լոգավորման համակարգերի սպասարկում,
 - Linux և windows օպերացիոն համակարգերի սպասարկում, մոնիտորինգ, բեռնվաճառության ստուգում, անվտանգության միջոցառումների կազմակերպում:
7. Ապահովել արտաքին ցանցային միացման և երթուղման հանգույցների անխափան աշխատանքը՝ հաշվառնելով հետևյալ պահանջները

- անձնագրային վարչությունում առկա արձեռնատների, արտաքին գերատեսչությունների և կազմակերպությունների հետ կապը ապահովող երթուղիչների սպասարկում և մոնիտորինգ,
 - արտաքին աշխարհի մուտքը դեպի համակարգ սահմանափակող կանոնների կիրառում, անհրաժեշտության դեպքում, փոփոխություն և մոնիտորինգ,
 - մասնագիտական միջամտություններ, կապուրիների ձևափոխումների հետ կապված:
8. Ապահովել համակարգերի կիրառական ծրագրային հանգույցների սպասարկումը՝ հաշվառնելով հետևյալ պահանջները.

- համակարգերի բոլոր ծրագրային ենթահամակարգերի, օժանդակ ծրագրային միջոցների, արտաքին գերատեսչությունների հետ տվյալների փոխանակաման միջոցների սերվիսների բարձրորակմանն ապահովելու համար, անհրաժեշտության դեպքում, միջամտություն կարգադրելով, անվտանգության և ֆունկցիոնալության ապահովում, ինչպես նաև, ծրագրավորվող հանգույցների ֆունկցիոնալ փոփոխությունների ենթարկում, կապված անճշտությունների հայտնաբերման, փոխանակվող տվյալների կազմի փոփոխության, աշխատանքի բարելավման որոշակի խնդիրների հետ
 - IIS(Internet Information Services) և windows հանգույցների վերահսկում, կոնֆիգուրացումների մոնիտորինգ, պրոֆիլակտիկա, ինչպես նաև, ծրագրավորվող հանգույցների ֆունկցիոնալ փոփոխությունների ենթարկում:
9. Կատարել համակարգերի տվյալների պարբերական արխիվավորում և անհրաժեշտության դեպքում տվյալների վերականգնում:


Պ Ա Տ Վ Ի Ի Ս ՈՒ

ՀՀ ներքին գործերի նախարարություն
 Բ. Երևան, Նալբանդյան 130
 ՀՀ Ֆինանսների նախարարության
 գործառնական վարչություն
 Հ/Հ 900011049187
 ՀՎՀՀ 02882913
 Հեռ. 010 59-61-52
 Էլ. հասցեն՝ gnumner@mia.gov.am

ՀՀ ՆԳՄ Ֆինանսիոր քարտուղար/
 (ստորագրություն)
 Կ.Տ

Կ Ա Տ Ա Բ Ո Ղ

«ՍՈՖԹ ՊՐՈՖ» ՍՊԸ
 Երևան, Ա.Խաչատրյան, 215, բն.20
 «ԱՄԻՕ ԲԱՆԿ ՓԲԸ»
 Հ/Հ 1150006170490418
 ՀՎՀՀ 00074714
 Հեռ: 091 43-11-19
 Էլ. Փոստ: margaryan@hotmail.com



Պ Ա Տ Վ Ի Ի Ա Տ ՈՒ

ՀՀ ներքին գործերի նախարարություն
Բ. Երևան, Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900011049187

ՀՎՀՀ 02882913

Հեռ. 010 59 61-52

Էլ. հասցեն՝ gnurner@mia.gov.am


ՀՀ ՆԳՆ Գլխավոր քարտուղար/
(ստորագրություն)
Կ.Տ



Կ Ա Տ Ա Ի Ո Ղ
«ՍՈՖԹ ՊՐՈՖ» ՍՊԸ
Երևան, Ա.Խաչատրյան, 2 15, բն.20
«ԱՄԻՕ ԲԱՆԿ ՓԲԸ»
Հ/Հ 1150006170490418

ՀՎՀՀ 00074714

Հեռ: 091 43-11-19

Էլ. Փոստ: margaryan@hotmail.com


Կ.Ս արգարյան
(ստորագրություն)



Պայմանագրի կողմ

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՍ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N _____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	Մատուցված ծառայությունների				Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամկացույցի/
			քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

